



ՀԱՅԿԱՅԻՆ ԵՐԱՅԻՆ

ԵՐ ԶԱԳԱՅԻՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 81

8 ՓԵՏՐՈՒՄ 1913

ԼԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ









# ԿԱԹՈՂՈՍԷԱՐԱԳԱՆԳ

ԿՐԾՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ  
ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի 8 Փետրուար 1913 Թիւ 81

«Մրբազան Բանաստեղծական Պոստ Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արժագանց շաբաթները շա-  
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-  
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգոս հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար,  
Մրբազան Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթները, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կաթ. Մէրի Տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիայ,  
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու սնամարտ:

Մեծ Դանոց տարիւ Ս. Եկեղեցին կը սկսի մասնաւոր ծիսակատարութիւններով յիշատակել Քրիս-  
տոսի Տեսնեալ մերոյ փրկագործ Սուրբ Զարչարանի, որ արդիւնաւորեց մեզ ամեն շնորհ եւ երջանկու-  
թիւն: Մենք ալ հաւատարմեան յայտն մասին մեծօրեան պատրաստ ելիք մը մասակարարելու մօթ-  
որոշեցինք հո յակաւորն Մասիլիոսի շատ երեւելի «Զարչարանաց Բարոց»ը քարգնանելով ամեն շարք  
մաս առ մաս դնել քերթիւ մէջ, աւարտելով Աւագ Շարքուն: Այսու հաճելի եւ օգտակար ծառայու-  
թիւն մը մատուցած ըլլալ կը կարծենք մեր պատուական ընթերցողներուն:

ԵԱՆ. ԽՄԲԳՐ.

Ք Ա Ր Ո Ջ

## ՅԻՍՈՒՄԻ ԶԱՐԶԱՐԱՆԱՑ ՎՐԱՅ

Թաւգմ. ԽԱՅԻԿ Վ. ԱԹԱՆԱՍԵԱՆ

«Ամենայն ինչ կատարեալ է» (Յովհ. ԺԺ, 30.):

Ամէն բան լրացեր է:

Ահա՛ վերջին խօսքերը, որոնցմով Խաչին  
վրայ յետին շունչը տուող Փրկիչը կը լրա-  
ցնէ այսօր իր պատարագը. ահա՛ վերջին  
հառաչները, զորս սուրբ կանայք եւ սիրելի  
Աշակերտը կը ժողվեն անոր մահամբձ բեր-  
նէն. ահա՛ վերջին դասերը, զորս կ'առնուն

իրենց ամենաբարի Վարդապետէն: Այսպէս  
ահա՛ կ'ելլէ աշխարհէ եւ կը թողու իր սն-  
րելի աշակերտները սրտաթափ, սրտաթունդ  
թէ իրմէ՛ զրկուելու վշտով եւ թէ խորին  
խորհրդով սա վերջին խօսքին. Ամէն բան  
լրացեր է. Ամենայն ինչ կատարեալ է:



Արդարեւ ինչ կրնան հասկնալ ասող . եւ որքան տխուր մտածումներու նշաւակ կ'ըլլայ իրենց վեհերօտ եւ վհատեալ միտքը՝ այս սարսափելի վայրկենին : Թերեւս արեւը որ կը խաւարի , երկիրը որ կը սարսի , սուգ կը զգենու , գերեզմանները որ կը բացուին , մեռեալները որ կը յառնեն , բոլոր բնութիւնը՝ որ կարծես կը գգրգի , տակն ու վրայ կ'ըլլայ , համարել կու տայ իրենց որ Յիսուս կը ծանուցանէ թէ ամէն բան իրեն հետ վերջանալու վրայ է . թէ աշխարհ չի կրնար կանգուն մնալ իր ստեղծողին մեռնելէն վերջը . թէ իր անձին դէմ գործուած դաւը՝ միայն տիեզերքի ամբողջական աւերումով պիտի քաւուի . եւ ինչ որ իր մահկանացու կետի քաւուի . եւ ինչ որ իր մահկանացու կետի մեջ լուծ էին իրմէ՝ վերջին օրուան մօտալուտ ըլլալու մասին , զիրենք աւելի եւս կը հաստատէ այս զարհուրելի մտածում մին մէջ . կը կարծեն թերեւս թէ ամէն ինչ վերջանալու վրայ է . Աւեցայն ինչ կ'ասաւեալ է :

Իսկ մենք , եղբայրներ , մենք գիտենք որ երբ վերջին լրումը հասնի , ահ , մարդու Որդին պիտի չերեւնայ խաչին վրայ կորակո՞ր եւ նախատակո՞ծ , ինչպէս կը տեսնենք այսօր . այլ փառաւոր ամպերու վրայ պիտի բազմի , հրեշտակները զինք պիտի շրջապատեն եւ զօրութիւն , ահ եւ մեծվայելչութիւն պիտի ընթանան իր առջեւէն : Զանա՞ք ուրեմն պարզելու նուիրական մեթութիւնը այս վերջին խօսքին , որ կը պարունակէ մեծ դասեր եւ խաչին ամբողջ վարդապետութիւնը :

Նախ՝ Տէրը յաճախ յայտնած էր իր մարդարէներուն բերնով որ նոխազներու եւ ցուլերու պատարագները իրեն հաճոյ չեն . կը մերժէր այդ անկատար զոհերը եւ նոյն իսկ ատոնց չէր հանդուրժեր երբէք , եթէ ատոնց վրայ չգտնէր իր Որդւոյն զենման հեռաւոր եւ խորհրդաւոր նկարագիրը . անոնք թանձր օրինակներ էին , որ ի կախ կը պահէին իր արդարութիւնը , բայց չէին կրնար անոր գահացում տալ . ուստի Յիսուսի մահը կը լըրացնէ այս նախկին պատարագներուն թերին . եւ իր Հօրը արդարութիւնը այլ եւս

մարդկութենէ պահանջելու բան մը չունի . առաջին լրում :

Երկրորդ՝ Տանուտիրոջ հպատակները մինչեւ այն ատեն միայն անոր ծառաներուն դէմ բռնացած էին . Երուսաղէմ՝ միայն իրեն զրկուած մարգարէները սպաննած էր . եւ իր ոճիրներուն չափը դեռ չէր լցուած . պէտք էր ուրեմն որ նոյն իսկ Որդւոյն եւ ժառանգին արիւնը թափուի , եւ այս ապաշխոր՝ ժողովուրդին անօրէնութիւնը իր լրումը առնու . երկրորդ լրում :

Վերջապէս՝ հին ատենուան արդարները , որ առաջ փառաւորած էին զԱստուած , ճշմարտութեան համար մեռնելով , ընծայած էին լոկ տխուր եւ թշուառ եւ զգայարանաց ու արեան փորձութիւններուն նշաւակ կեանք մը , եւ մահուան անէծքին կնիքով ուսած մարմին մը . բայց Յիսուս կը հրաժարի ամենէն կնիքից , որ « եւ է մեղքէ չէր կրնար արտաւորուիլ . կ'ընծայէ հոգի մը զոր ոչ ոք կրնար իրմէ յափշտակել , եթէ ինք անձամբ զայն յանձնել չուզենար . եւ յօժար կամօք ճաշակելով մահը , որմէ ազատ էր իր բնութեան պայմանով , կու տայ իր Հօրը սիրոյ ամենամեծ ցոյցը զոր սուրբերէն ոչ ոք տուած էր մինչեւ այն ատեն . երրորդ լրում :

Այսինքն թէ Փրկչին մահը կը պարունակէ երեք լրում , որոնք պիտի բացատրեն մեղի բովանդակ խորհուրդը այս մեծ պատարագին , որուն տեսարանը կը նորոգէ եւ յիշատակը կը պատուէ այսօր Եկեղեցին . լրում արդարութեան՝ Հօրը կողմանէ , լրում չարութեան՝ մարդոց կողմանէ , լրում սիրոյ՝ Յիսուսի կողմանէ : Այս երեք ճշմարտութիւնները պիտի բաժնեն այս բոլոր քարոզը եւ Մարդացեալ Աստուծոյ նշաւակութեան պատմութիւնը . հոն պիտի գտնենք հիմնական դասեր եւ ճշմարտութիւններ զորո աշխարհ չի ճանչնար . որովհետեւ աշխարհ չի ճանչնար զՅիսուս . եւ պիտի տեսնենք թէ խաչն է դատաւարարութիւն մեղաւորին եւ լրում իր ապերախտութեան :

Դու սակայն , ո՛վ պաշտելի խաչ , դու մեր իմակ ապաւէնն ես , կը կրես այսօր մեր յոյ-



սը, մեր փրկութիւնը, մեր դարմանը, մեր օրէնքը, մեր Աւետարանը. ամէնը քու նուիրական Փայտիդ կապուած է. կը պահես մեզի մեր խաղաղութեան, մեր Աստուծոյ հետ հաշտութեան Աստուածային գրաւականը. այսօր դու գթութեան գահ մըն ես մանաւանդ, որուն կրնանք մօտենալ վստահութեամբ: Ուստի ոտքդ կ'իյնանք բոլոր Նկեղեցւոյ հետ:

Ո՛ղջ լեւ, ո՛վ եւաջ, ո՛վ միակ յոյս,  
Յայսմ աւուր Զարչարանաց,  
Յաւե՛լ շնորհս բարեպաշտից,  
Զամբարեաց մեղս քաւեա՛:

## ՏԵՐ ԿՈՄԻՏԱ ՔԱՀԱՆԱՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

Ը

### ՂԱԼԱԹԻՅՑ “ՁԵԹՎԱԽԱՆԷ”, Ն

Մայրաքաղաքիս երկու հարիւր տարի առաջ ունեցած արտաքին վիճակը, անոր պատմութեան քիչ շատ տեղեակ եղողներուն արդէն յայտնի է: Նոյն իսկ առանց գիրքերը թղթատելու մեզի ժամանակակից տարիքոս անձինքներուն աւանդական պատմութիւններէն յաճախ լսած եմք թէ՛ այն թուականին, այժմեան հոյակապ շէնքերով զարդարուած փառապանծ Բերան պարզապէս լիւս մըն էր անբնակ եւ ամայի եւ անոր ստորոտը կ'իջնէր մինչեւ Երեքսէք-Գալստրըմի վերերը, ուր կայ Մեկլիքի մահմէտական կրօնաւորաց վանքը (թէքքէ), ուսկից ցանցառ կերպով կը սկսէին տուները եւ կ'իջնէին մինչեւ ծովը յաջ ու յահեակ:

Ղալաթիոյ մէջ, որ երկու հարիւր տարի եւ աւելի առաջ ալ գոյութիւն ունէր, բաւականաչափ հսկայ սննդ, խանութներ, պանդոկներ եւ մզկիթներ կային Թօփխանէէն մինչեւ Գասրմ փաշա տանող ճամբուն երկայնութեամբ: Առ հասարակ անկանոն նեղ եւ

եղեւէջներով ստորաբաժանեալ փողոցներ, ճիշտ այն ատենուան ճաշակով կամ զաղափարներով շինուած մէկ կամ առ առաւել՝ երկու դասիկոն բարձրութիւն ունեցող բազմաթիւ աղքատակազմ տներ կը գտնուէին: Մեզի ծանօթ հիմակուան լայնատարած եւ բարձրադիր Օսմանեան դրամատան անմիջապէս ետեւը խորունկի մէջ էր Բէնչէնպիհ Պաղար ըսուած թաղը, որու մէջ կը աւանանք Եէնի Ճամբ կոչուած մզկիթ մը, որոյ ճիշտ ետեւը խիստ անձուկ փողոցով մը բաժնուած փոքր պարտիզի մը մէջ կամարաշէն հին զանգուած մը որ նաեւ ետեւի կողմէն անմիջապէս հիմակուան երկրորդ դատարան (Հուգուզ)ի կից է: Այդ հին զանգուածը սաճնիս գետնայարկին վրայ 7-8 փոքր պարզ հնութիւններ շնչող փոքր սենեակներով պաշտօնարան մ'է որ հիմայ «Մահքէմէի Շէրիէ» անունով Մահմէտականաց կրօնական ժողովի կը ծառայէ: Ինչպէս երկու հարիւր տարի առաջ սա կ'անուանուէր Ղալաթիոյ «Ձէթվախանէ»ն եւ հոս կը հստէր «Գատը Մօլլա», որ էր Երկրորդ Դինպետ Մահմէտական կրօնի: Հոս տեղի պաշտօնեայք ներկայապէս առանց բացառութեան փաթեռ-ցաւորներ են՝ այսինքն Մահմէտական եկեղեցականք, կամ կարդացողք (Իւլէմայք), որոց գլուխն է Նախկ կամ Գասը, կրօնական մեծ պաշտօնեայ, եւ հոն կը տեսնուին որ եւ է կրօնական, ամուսնական խնդիրներ եւայլն: Այն նեղ փողային վրայ բացուած պարտիզի պատուհաններէն ներս նայող օտարական մը, հնութեան հետ խառն սրբութիւն եւ մեղամաղձութիւն առթող հոս մը կ'զգայ, որ նոյն իսկ հանդարտ մարդոց ջղախութիւնը կը գրգռէ:

Եղարքոս Ալի փաշան՝ տենդոտ անհամբերութեամբ կը սպասէր Ղալաթիոյ զատու վրձնոյն:

Բանտապահ պաշտօնեայները եւ խումբ մը հակառակորդներ անմիջապէս փութացին բարձրագոյն հրամանը գործադրելու: Առին իրենց հետը զՏէր Կոմիտաս եւ շտապառուղուեցան դէպի վար՝ Ղալաթիա անցնելու նաւակներով:



Ղալաթիոյ հրապարակը իրենց առօրեայ գործերովը կը զբաղէին, երբ տեսան Գաւա-քէօյի մէջ ամբողջ մը որ կը յառաջանար Պոլսոյ կողմէն, եւ օձապտոյտ նեղիկ փողոցներէ անցնելով կ'ուղղուէր դէպի «Բէնչէմ-պին Պապար» թաղը: Ո՛չ ոք տարակուսեցաւ թէ խումբը կազմողները Հայեր էին: Ասոնք մի քանի նեղ փողոցներ անցնելէ ետքը, հասան մեր վերը նկարագրած Մօլլայի պաշտօնատեղին: Ուր խնդիրը առաքողին հրամանը հնչելուն պէս, ատենանք կազմուեցաւ: Մեծն Մօլլան իւր գիրքը առաւ, եւ անդամք հետեւեցան: Յովհաննէս Պատրիարք, հռչակաւոր Հայ Եկեղեցականը՝ Մահմէտական իւր պաշտօնակցին հետ դէմ առ դէմ գտնուեցաւ: Կրկնեց նա՝ իւր յերիւրեալ, զրպարտիչ եւ սրբապիղծ ամբաստանութիւնները, զորս երկու օրէ ի վեր Եպարքոսի առջեւ պարզած էր ընդդէմ անմեղ Տ. Կոմիտաս Քահանային: «Մօլլան» եւս իր կարգին ըստ բերման պաշտօնին, ուզեց պահիկ մը քննել անձամբ զՏէր Կոմիտաս, եւ խօսքը ուղղելով առ երանելին ըսաւ. «Քեզ գէ՛մ եղած այդ ամբաստանութեանց համար դու ի՞նչ կ'ըսես, զուրցէ տեսնենք»: Աստուծոյ Մառան, առանց վարանելու պատասխանեց ու ըսաւ. «Այս ըսուած բաներու մասին ես անմեղ եմ. վառնդի ազգաւ Հայ եմ, Քրիստոնեայ եւ Վեհափառ Սուլթանի հպատակ. այս մարդիկ ատելութեամբ մը զիս քեզի մատնեցին: Ուստի գու գետես, արգարութիւնը քու ձեռքդ է. ինչպէս որ կ'ուզեմ տրամադրէ՛, կամք Տեառն եղիցի:» (Տ. Գրիգ. Եւգով:) Նախագահ Մօլլան, հարկ տեսաւ վկայներու, խնդիրը ստուգելու՝ որովհետեւ ամբաստանութեանց եւ խոստովանութեան մէջ հակասութիւն կար. ուստի Ղալաթիալնակ ծանօթ Հայազգի մի քանի երեւելի մարդիկներ կանչել տուաւ. եւ անոնց հարցուց թէ Տէր Կոմիտասը ի՞նչոր կը ճանչնան, Հայ քահանայ, թէ Ֆրանկ: Ասոնք առ հասարակ վրկայեցին թէ Տէր Կոմիտասը Հայ Քահանայ է: Ասոր վրայ չարախօսք անանելով որ իրենց տմբաստանութիւնը հաստատող մէկ մը չի գտնուեցաւ այն վկայներու մէջ, չփոթե-

ցան, եւ իսկոյն Պատրիարքի արբանեակներէն չորս Քահանայք յառաջ նետուելով բացարձակ կերպով վկայեցին թէ Ֆրանկ է, եւ միւս կողմանէ ամբողջ կ'ազմկէր բողոքելով թէ պէտք է մէջտեղէն վերցնել: Սակայն դատաւոր Մօլլան լուրջ դիրք մը բռնեց, բոլոր եղած այն ամբաստանութիւնները ի մի ամփոփելով մերժեց բացարձակապէս մահուան դատաւճիռ արձակել, եւ կ'ըսէր թէ իրենց օրինաց Գրոց մէջ իրաւունք չաւրուիր որ այսպիսի պատճառներու համար մէկ մը մահուան դատապարտուի. եւ զեռ իր ականջներուն մէջ Տէր Կոմիտասին կենդանի ձայնը կ'արձագանգէր: Նա՛ լաւ բացատրած էր Մօլլային թէ իր ոսոխները իրեն ուղղափառ դաւանութիւնը իբրեւ յանցանք վերադրելով անհիմն չարախօսութիւններ կը կեղծէին. եւ թէ՛ ո՛չ ապատմութիւն նիւթած, եւ ո՛չ իր ազգին կամ Տէրութեան օրինաց ընդդէմ սխալ քայլ մը առած չէր: Հետեւաբար Մօլլան անուշ խօսքերով հակառակորդները խրատել սկսաւ որ այսպիսի անիրաւ դատախազութիւնները մէկդի դնելով, հաշտութեամբ խնդրոյն վերջ տան:

Այս վայրկենիս, հակառակորդաց մէջ յայտնի իրարանցում մը տեղի ունեցաւ. վառնդի իրենց այնքան խանդավառութեամբ պաշտպանած դատը, որ բոլոր Հայ ազգը մեծ գլորումէ մը պիտի ազատէր, եւ ուղղափառութիւնը իւր խանձարութիւն մէջ պիտի խեղդէր, եւ Հոռովայ Քահանայապետներուն ազդեցութիւնը պիտի ջնջէր, չորս վատ Հայերուն վկայութեամբ մէկ վայրկենի միջ ջուրը ինչպէս խեղդամահ եղած էր: Ուստի Մօլլայէն ներողութիւն խնդրելով պահիկ մը առանձնացան: Կարծ խորհրդակցութենէ մը ետք, Դատաւորը, որ վայրկեան մը իւր առանձին սենեակը քաշուած էր, հոն Պատրիարքի հետ համաոք, սակայն իրեն մասին խիստ օգտակար տեսութիւն մը ունեցաւ, ապա վերադարձաւ յատեան եւ իրեն յատուկ բազմոցին վրայ Տաճկաց սովորութեան համաձայն ծալապատիկ նստաւ: Խորհրդակցութեան վնացող եւ Աստուծոյ վախը արհամարող խումբն ալ չ'ուշացաւ խուժեց



ներս . եւ պոռալով կարգ մը զըրպարտութիւններ տեղացուցին Տէր Կոմիտասայ դէմ . մանաւանդ համարձակօրէն կ'ըսէին թէ արժանի չէ որ այս Քահանայն անպատիժ արձակուի : Եւ իրենց խօսքը առ Դատաւորն ուղղելով ըսին . «Ո՛վ Դատաւոր, Դու մեր վկայութիւններսն կարեւորութիւն չտուիր եւ ըսիր թէ անոնք օրինաց հակառակ են . արդ գիտցած ըլլաս թէ այս Քահանայն չէ թէ միայն Ֆրանկ է, ինչպէս կ'ըսէինք , հապա նաեւ ունի յանդգնութիւնը Քրիստոնեայ երկիրներ փախցնելու այն Հայերը , որ Մահմետականութիւնը դաւանած են» (Տեղեկ . Տ . Գրիգ . Եւզով .) :

Ձայս լսելով Մօլլան , հրացայտ ակնարկ մը նետեց խօսողներուն վրայ եւ արտասանած բառերը շեշտելով սովորականէն աւելի բարձր ձայնով մը ըսաւ , «Ի՞նչ սարսափելի վկայութիւն է որ կ'ընէք , ո՛վ Քահանայք , դատապարտութիւնը գրող զրչէն արիւն կը ցայտի . սակայն ես անոր արիւնէն անպարտ եմ , թող ձեր գլխուն ըլլայ» . (նոյն) : Այն ատեն ամէնքը ի միասին ձեռքերնին վեր վերցնելով , գոչեցին . «Անոր արիւնը մեր եւ մեր որդւոց գլխուն ըլլայ» : Այս վայրկեանիս Յովհաննէս Պատրիարքն՝ ա՛լ աւելի կատղած կուրծքը բանալով կեղծաւորութեամբ , մարմնոյն վրայէն հագած քուրձէ շապիկը Մօլլային ցոյց տալով ըսաւ . «Ես որ այդ շապիկը կը հագնիմ , մի՛ թէ սուտ վկայութիւն պիտի ընեմ» (Տեղեկ . Սէրգ . Եպսկ . Մաղաք . Ճէվահիրճի . Հ . Մատթ . Մխիթրեան .) Ահա այս արիւնն է որ երկու հարիւր տարիներէ ի վեր կը ծանրանայ զժբախտ Հայ ազգին վրայ եւ դայն կը լլկէ :

Ինչպէս ուժասպառ հիւանդ մը բժշկական ճարտարութեամբ իր հիւժամաշ երակներուն մէջ ներմուծուած կազդուրիչ արեան ներ-


գործութեան ներքեւ յանկարծ նոր ոյժ եւ կենդանութիւն կը ստանայ , այսպէս Դատաւորն ալ այս անգամ առաջինէն աւելի զօրաւոր գտնուեցաւ եւ օրէնքը ահարատ պահելու համար ունեցած պարտքը՝ կեղծաւորութեամբ պետութեան եւ կրօնից հաւատարմութեան յանգեցնելով , խիղճը հանդարտեցնել ջանաց միանգամայն իր անձին պատասխանատուութիւնը բեռնելով դատախազներու վրայ եւ արատաւորեց իր հոգին եւ պաշտօնը , չնչին մամոնայի համար :

Մինչ Դատաւորը հանդիսաւոր զիրքով մը գրիչը ձեռք առած դատավճիռը գրել սկսաւ , յանկարծ Տէր Կոմիտաս յԱստուածային զօրութենէ ներշնչեալ , խօսքը Դատաւորին ուղղելով ըսաւ . «Երկնից եւ երկրի արարողին արդարութեան իրաւանցը իբրեւ Դատաւոր նստած ես Դուն հոս , ո՛վ վսեմափայլ Տէր , եւ զիս , որ ասոնց ըրած չարախօսութեանց յանցանքէն անպարտ եմ , մահուան կը դատապարտես : Արդ ընդհանուր դատաւորանի օրը այն անաչառ եւ անաւոր դատաւորին՝ Աստուծոյ առջեւ իմ արիւնս ո՛րմէ պիտի պահանջեմ . քեզմէ՞ թէ ասոնցմէ» : Մօլլան վրդովեցաւ . եւ ճնշելով իր յուզումը՝ պատասխանեց . «Շատ բնական է թէ ասոնցմէ պիտի պահանջես , որովհետեւ քանի որ ես քու դատաւորանդ , հակառակորդներուդ ամբաստանութեանցը դէմ , շատ մը վկայներու հաստատութեամբ կատարած եմ , քու արեանդ պարտական չեմ ըլլար . հապա անոնք պարտական կ'ըլլան» :

Դատաւորին այս խօսքերուն վրայ , Արդարոյն արեան ծարաւի Քահանայք եւ ժողովուրդք , «Այո՛ , անոր արիւնը մեր վրայ ըլլայ . եւ վարձքը քեզի , միայն թէ զինքը մէջտեղէն վերցնես» աղաղակեցին :

(Շարունակելի)





ՐՕՍԱ ՔԻԼԻՍԷԻ ՇԷՐԻՖԻՆՏԷՆ ԲԱՍՏԻԳ ՕԼՈՒՆՍԸՇ ՕԼԱՆ  
ԷՐՄԷՆԻ ԳԱԹՕԼԻՔԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ  
ԿԻՆԼԻԿԻԱՄ ՊԱՏՏՐԻԱՐԲԸ  
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸՆ ԳՈՒԼԸ  
ՕՆ ԻՒԶԻԻՆՃԻԻ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ

Րէտուլանէ պիւր ղայրէրլէ մուափնլէրիմիզ օլան, սէվկիւլիւ էվլասլարըմըզ  
Աւագ քեմիմիզիմ Քազ. Ժողովրդապետներին վէ միւհքէրէմ  
Վարդապետներին սէլամ վէ քէպէրրիֆեաքը բուհանիյէ

Մուազզէզ էվլասլար,

Քրիստոսըն ազիզ Քիլիսաը քէնտի Ալ-  
լահանի միւհեսսիսինտէն իհտաս օլունմուշ օ-  
լան քահանալըզ կարգը վասթասըլա, Ալ-  
լահըն ճէմաաթընը իտարէ իթմէք, ծնլարը  
սէլամէթի էպէտիյէյէ իրշատ էյլէմէք իչիւն,  
սահիպի հիւանի ախլէազ, ալիւմ վէ ղայեուր  
մէմուրլարտ մալիք օլմայա նէ գատար ճէհտ  
ու ղայրէթ իտէրսէ, Ս. Պապ խորհուրդը-  
նըն գուտսիյէթիւնի տաիմա եիւքսէք թու-  
թարազ, օ ազիզ խորհուրդըն լայըզը վէճհլէ  
իճրասըլա ասհապը ֆազիլէթ էպէվէյնէ վէ  
պունլարտան տօղաճազ խայր իւլ խալէֆ վէ  
տիյանէթէրվէր էվլատլարա մալիք օլմայը  
տո օ գատար սամիմիյէթլէ արզու վէ պու  
արզուսընըն գուվվէտէն ֆիլիէ չըզմասընա  
օ նիւպէթտէ պէզլի ղայրէթ էյլէր: Պու եւ-

տինճի վէ սօն խորհուրդըն եանի Պապ խոր-  
հուրդընըն էնէմիյէթի ազիմէսինէ վէ գուտ-  
սիյէթիւնէ մէսնի, սէվկիլիւ էվլատլար, պու  
կոնդակըմըզլա, ճէմաաթըմըզ ալիլէլէրինի  
սաստէթիւնէ, թէրազըմընա վէ սէլամէթի  
էպէտիյէսինէ խաաիմ օլաճազ վէ այնի գէ-  
մանտա էվլատլարըմըզըն ճիտաի վէ Գաթ-  
թօլիք տայիրէսինտէ թէրպիյէսինի թէէմին  
էյլէյէճէք օլան, պու ֆէվզէլատէ մուհիմմ վէ  
էսասի մէտէլէ հագզընտա պասթը քէլամ ի-  
տէճէլիզ:

— Էվվէթ, ճանլարը թագաիւ վէ Գա-  
թօլիք մէզէպլինին շէրէֆիւնի թէգեիտ իթ-  
մէք իչիւն Պապ խորհուրդը ճէհապը Ալլահ  
թարաֆընտան իհտաս օլունմուշ տըր: Պիւնաէն  
ալէյհ, Գաթթօլիք ճէմաաթըմըզըն վէ էպէ-



վէյնին պու զայեթ մուհիմ մէսէլէնին պաշ-  
լընա հոգթալարնա էյիճէ վազըֆ օլապիլ-  
մէլէրի իչիւն , պուրատա , էվվէլա , Պսակ  
խորհուրդընըն մահիյէթ վէ խառիյէթի հազ-  
զընտա , սանիէն , մէսուտ վէ պախթիյար  
պիր իզտիվաճըն վէսայիթի հազզընտա , սա-  
լիսէն տէ , իզտիվաճա հազզըլանանլարըն  
վէզայիթի հազզընտա պահա էաէճէյիզ :

Ա . Պսակ , Բիլխայը շէրիֆին խորհուրդ-  
լարընտան պիրի տիր քի , զէվճ իլէ զէվճէ  
արասընտա մուգատտէս վէ շէօղիւմէզ պիր  
բասըթա , պիր իթթիհատ թէշքիլ իտէր  
վէ պու մէսլէքտէ Բրիտոյանճա հաշայա-  
պիլմէլէրի , մէշրու էվլասլար սահիպի օլմա-  
լարը վէ ծնլարը Ալլահըն լութֆը վէ գօր-  
զուսը տայիրէսինտէ պէօյիւտպիլմէլէրի ի-  
չիւն ծնլարա շնորհք վէրի : Յիսուստան էվ-  
վէլ իզտիվաճ պիր խորհուրդ օլմայուպ ան-  
ճազ թապիի վէ մէսէնի պիր գօնթրաթ ի-  
տի , մամաֆիյն , պիտայէթտէն պէրի , տայի-  
մա պուհա պիրտէ մէզէպի շէք վէրիլթրոի .  
մէսէլա Բիթապը մուգատտէստէ օգույօրըզ  
քի Ալլահ , Ադամ վէ Եւայը շու սուրէթլէ  
միւպարէքլէյօր , «Չօլայընըզ վէ թէքէտիւր  
խախիզ» (Ծննդ . Բ .) : Ֆազաթ Յիսուս Բը-  
րիստոս պու սատէ գօնթրաթը պիր խոր-  
հուրդ տէրէճէյի ալիյէսինէ հիւքսէլթաի վէ  
օ թասլիի բապըթայը , իզտիվաճ իտէնլէր ի-  
չիւն սէմալի վէ բուհանի լութֆլար մէն-  
պարնա իֆրազ էյլէտի : Պուհըն պէօյլէ օլ-  
մասը տին մատտէսի տիր : Տրիտինդեան Ժո-  
ղով տախի 24իւնճիւ ճէլսէսինին պիրինճի  
գանուհընտա պէօյլէ էօյրէտիր . «էյէր պիր  
քիմսէ Պսակ , Յիսուս Բրիստոս էֆէնալիմըզ-  
տէն թէէսիս իտիլմիշ օլան Աւտարանական  
օրէնքին սահիւ վէ խուսուսի խորհուրդլա-  
րընտան պիրի օլմայուպ , Բիլխա իչիւտէ ին-  
սանի պիր իճատ տըր , վէ շնորհք տա վէ-  
րէմէզ , տէմէյէ ճիւրաթ իտէճէք օլուրսա ,  
անաթէմա , լանէթ օլուհն» : Պօղոս Առաք-  
եալ Պսակ հազզընտա շու սուրէթլէ իտարէի  
քէլամտա պուլընըր . «Գարըլար Բապալա ի-  
թաաթ իտէր կիպի քէնտի գօճալարընա ի-  
թաաթ իթսինլէր , զիրա Բրիստոսըն , Բիլխ-  
սանըն պաշը վէ ճիւմին խէլասքեարը օլուրը

կիպի , զէվճ տախի զէվճէսինին պաշը տըր»  
(Եփես . Ե . 22 , 23) : Թէքրար «Պու խոր-  
հուրդ պէօյիւք տիր , լաքին պէն պուհը  
Բրիստոստա վէ Բիլխատա տէյօրում» (Անդ  
32) : Պու քէլամլարա Պօղոս Առաքեալ , Պը-  
սակ խորհուրդընտա զէվճ ու զէվճէնին պիր-  
լէշմէսինի Յիսուս Բրիստոսըն քէնտի Բիլխ-  
սասըլա պիրլէշմէսինին էօրնէյի օլտուղու  
իչիւն , պու խորհուրդը պիօյիւք թէսմիյէ է-  
տիյօր :

Պսակ խորհուրդընը թէշքիլ էյլէյէն ճիւք  
նիքեալ օլանլարըն մուգատտէլէթէն վէրտիք-  
լէրի բիզա տըր , պու խորհուրդըն ձեւի իսէ ,  
նիքեալ օլանլար թարաֆընտան վէրիլէն բի-  
զայը իմա վէ իզհար իտէն ալամէթլէր , վէ  
եախօտ քէլիմէլէր տիր : Շու հալտէ պու  
խորհուրդըն մէմուրլարը նիքեալ օլանլար  
տըր . ֆազաթ Բիլխայը շէրիֆ , օ պսակը  
օրհնել իթմէսի , ծնուն գուտայիլթիինի թէ-  
մին վէ տէֆթէրի մախսուսընա գայա վէ  
թէսճիլ էյլէմէսի իչիւն մութլապա Ժողովըր-  
դապետին տէ հազըր պուլընմասընը էմր ի-  
տէր :

Մատամ քի պսակ , ճէնապը Ալլահըն  
թէէսիս իթմիշ օլտուղը պիր խորհուրդ տըր ,  
շու հալտէ ծնուն իւշ խասսէսի օլմագ լա-  
զըմ կէլիր , եանի գուսսիյէք (Սրուլթիւն)  
պիլիլի (Միուլթիւն) վէ Ֆիսիս օլուհմազլըր  
(Անլուճանելիութիւն) :

ա . Գուսսիյէք .— Պսակըն մուգատտէս  
օլտուղընա չիւպիէ իտիլէմէզ : Հէր նէ գա-  
տար տա պազը հերտիկոսլար պըսակըն  
գուտայիլթիինի ինքեար իթտիլէր իսէ տէ ,  
անը Դրախտոտա պիզզաթ Ալլահ իհտաս էյ-  
լէմիշ օլտուղը , վէ Յիսուս Բրիստոս թարա-  
ֆընտան տա խորհուրդ տէրէճէսինէ թէրֆի  
իտիլմիշ օլտուղը հասէպիլլէ , օ մուգատտէս  
տիր : Ֆազաթ պու , հէր քէսին թէզէվվիւճ  
էյլէմէսի լազըմ կէլիր տէմէք նէթիճէսինի  
վէրէմէզ , չիւնքի պիքիլլէք տահա մուգատ-  
տէս վէ տահա թէքմիլ պիր մէսլէք տիր ,  
վէ ուխտ վասըթասըլա պիքիլ գալմագ ի-  
չիւն Ալլահտան տալէթ օլուհնան վէ լութֆ  
ալանլար , տիւնեատան ուգազլաշմայա վէ  
պիքիլլէքլէ հաշամայա պօրճլու տըրլար :



Քէնտիսիանի Ալլահա թագութիւմ իտէն վէ տիւն-  
հանըն շէհէվաթը նէֆոսանիյէսինտէն թէ-  
սպիւտ էյլէյէն պիր քիմսէ թապիւի տիր քի  
Ալլահա բէք մագպուլ պիր ֆէտաքիարլըպտա  
պուլունմը: օլուր: «Պաքիրէսինի էվլէնտի-  
բէն էյի հաբար, էվլէնտիրմէյէն տահա էյի  
հաբար»: (Ա. Կորն. է, 38): Տրիտենդեան  
ժողովըն գարարը տա պու հօլտա սըր: «էյէր  
պիր քիմսէ էվլէնմէք պիրքիր գալմագտան  
տահա էյի տիր, վէ պիրքիրլէքէ հաշամագ  
մագպուլ վէ միւթէպէր տէյիլ տիր, տէմէյէ  
ճիւրաթ իտէրսէ, մէլուն օլտուն» (Ճէլս.  
24. Գ. 10):

Բ. Պիրլիֆ.— Էվվէթ, այնի զէվճէ իլէ  
պէրապէր պսակ շնորհքը իչինսէ հաշամա-  
լարընը իսթիլզամ էյլէյէն նիքեան պիրլիյի  
էլզէմ տիր. պինսէն ալէյհ այնի զէմանտա  
միւթէատտիտ զէվճէյէ մալիք օլմագ մէմնու  
սըր: Մովսիսական օրէնք գէմանընտա պիր  
էրքէյին միւթէատտիտ զէվճէլէր ալապիլ-  
մէսինէ միւսաատէ իտիլմիչտի. ֆազաթ Յի-  
սուս Քրիստոս, Աւետարանական օրէնք վա-  
սըթասըլա պուըն մէն էյլէտի վէ պսակ  
խորհուրդընա պիր շարթը էսասի մագամըն-  
տա, ծուռն գատիմի պիրլիյինի պախշ իթ-  
տի. իշթէ պու սէպէպտէն Տրիտենդեան Ս.  
ժողով 24իւնճիւ ճէլսէյին 2ինճի գանունըն-  
տա շու սուրէթլէ գարար վէրմիշ տիր. «է-  
կէր պիր քիմսէ, Քրիստիյանլար այնի զէ-  
մանտա միւթէատտիտ զէվճ վէ հա զէվճէյէ  
մալիք օլապիլիլէր վէ պու, հիչ պիր Ալլա-  
հանի օրէնք իլէ մէմնու տէյիլ տիր, տէյէ-  
ճէք օլուրա, լանէթլի օլտուն»: Ֆազաթ  
նիքեանլա պիրլէշմիշ օլանլարտան պիրինին  
վուզուլի վէֆաթընտա, տիկէրինին պիր պաշ-  
պա զէվճ վէ հա զէվճէ ալմասընա միւսաա-  
տէ վար սըր: Պօղոս Առաքեալ տա պէօյլէ  
տէր. «Գարը, գօճասը սաղ օլտուղը միւտ-  
տէթճէ պաղլը սըր, լաքին գօճասընըն վէ-  
ֆաթընտա արթըպ սէրպէսթ տիր, հէր քիմ  
իլէ իսթէրսէ թէղէվվիւճ իտէպիլիւր, էլլէրիւր  
քի Բապպտա օլտուն» (Ա. Կորնթ. է. 39).  
Շուրասընա տա տիպգաթ իտիլմէլի տիր քի,  
Քիլիսա իքինճի պսակլարը բէք թալսիյէ  
իթմէլ: Պօղոս Առաքեալ տուլ գատընլար

հագգընտա աշիքեար սուրէթտէ տէր քի,  
«Պէնիմ նասիհաթըմ մուճիպինճէ, էօյլէ գա-  
լաճագ օլուրոտ, տահա էյի տիր, հէր նէ  
գատար տա պէնտէ Ալլահըն բուըն վար իտէ  
տէ, պէն պէօյլէ զանն իտէրիմ» (Ա. Կորնթ.  
է. 40): Էվվէթ, հէմ Քիթապը շէրիֆ վէ  
հէմ տէ Քիլիսա տուլ գարըլարըն տիւնեա-  
տան ուզապլաշմալարընը տահա միւրէճճահ  
ատտ էտէրլէր. ֆազաթ պու խուսուտա  
հիչ պիր մէճպուրիյէթ վաղ իթմէյուպ քէն-  
տիլէրի սէրպէսթ պրագըրլար, եանի Բապպ-  
սա Ալլահըն օրէնքլէրինէ կէօրէ էվլէնմէլէ-  
րինէ իզն վէրիլէր: (Մապասի վար)

## ՄԵՆՈՒՐԻՆ Ս. ԱՌԵՏԱՐԱՆԻ

### ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Բ

1. Մարիամու Կուսին Ս. Յովսէփայ հեռ  
ամուսնութիւնը: Ք. Փրկչին յուրիւնը, Ծնունդն  
ու ամուսնութիւնը:

(Մատթ. Ա. — 18—25)

(Շար.)

17. Եւ ահա Միտիայի նախագուշակ մարգա-  
րէութիւններուն ամենէն զօրաւորը, բացայայտն ու  
ամենը մէկէն մանրամասնաբար ամփոփողը՝ Ես. է.  
14, կը յիշատակէ հոս Աւետարանիչը, ցոյց տալու  
համար թէ ինչպէս ճշգրտօրէն ստուգուեցաւ անի  
Քրիստոս. և այս է ոսկի բռնալի մարգարէութեանց,  
որով միւսերն խոնարհ կը գտնան: «Ահա Կոյսը պիտի  
յղանայ ու պիտի ծնանի զաւակ մը: Կան Աստուա-  
ճաքաններ, (Պօսիւէ, Կալմէթ, Էն. և Նորերը), որոնք  
կը մեկնեն թէ երկու իմաստով և երկու մանկանց  
վրայ խօսեցաւ Մարգարէն. 1. Նշանակական (Typi-  
que) իմաստով, և այս կը յարմարի Եսայիայ բնա-  
գրոյն (texte) որ Աքաղ թագաւորին ներկայ իշան  
մըն ալ կու տար թշնամեաց պարտութեան, որ կը  
տեսնուի նոս Ը. 4-4. Կա՛մ Աքաղու կամ իշան ինքն  
մարգարէին որդւոյն վրայ: Այս մեկնութիւնը շատ  
գծուարութիւններ կը հարթէ, որոնք կրնան յառաջ  
գոյ Մարգարէից միւսերն ժամանակ ալլուալի նիւ-  
թերու վրայ ճառելէն: 2. Բուն իմաստով, որ ան-  
հէրքելիօրէն Միտիայի համար է. և այսպէս կը մեկ-  
նեն բոլոր Ս. Հարք և Ս. Եկեղեցին: Քանզի ուրիշ »



և է կոյս չկար նոյն իսկ Ա. քաղին կամ Եսայիայ գաւառացի համար ալ հասկցուելով. ուստի բացարձակ կերպով. հրաշքի մը վրայ էր խօսքը: Եւ ԿՈՅՈՒՆ Եւրոպացիներէն մէջ մասնաւորութեամբ է յօդով, հաւաքման. և այդ բառը կը նշանակէ անապական կոյս աղջիկ, որ մեկուսացած է և պահպանուած, ինչպէս կ'ըսէ նաև Յովսէփոս Յը. Հնութ. Հրէից. Գլ. Ժ. — և Երեք անգամ կայ Ս. Գրքի մէջ, Ծննդ. ԻԳ. 16. 43, Ռեբեկայի համար. — Երբ. Բ. 8, Մովսէսի քոյրը Մարիամու համար. և հայր թարգմանած է կոյս կամ աղջիկ. և բնաւ դործածուած չէ ուրիշ իմաստով. Եւ կ'ըսէ թէ այս կոյսը՝ իր կոյս վիճակին մէջ պիտի յղանայ ու պիտի ծնանի. և այս է այն մեծ, արտասովոր և գերբնական ու հրաշքի նշանը զոր տեսնենք իմ կոյսը՝ ոչ այլ ևս Ա. քաղութ. ալ Դաւթի տանը (Ես. Ի. 43, 44). «Ապա թէ ոչ զի՞նչ այն նշան իցէ երբ կ'իյն մանկամարդ ծնանիցի եւ ոչ կոյս. զի մանկամարդն անուն հասակի է եւ ոչ անապականութեան» (Ս. Հերոս.). — «Ձի թէ չէր կոյս որ յղանայոցն էր եւ ծնանիցը, այլ ըստ ամուսնութեան օրինաց իրեն գործէին, զի՞նչ ինչ նշանք էին, որ չէին նշանք, զի նշանին պարս է զբազմաց սովորութեան անցանել կարգաւ, եւ նոր եւ չգնաղ երեւել. ապա թէ ոչ զիսորդ իցէ նշան» (Ոսկ. ձ. Ե.):

18. Ու պիտի կոչեն անոր անունը՝ ԵՄՄԱՆՈՒԷԼ, որ ըսել է՝ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՋԻ ՀԵՏԻ: Ահա Քրիստոսի Աստուածութիւնը, զոր բոլոր մարգարէութիւնք կը գուշակեն և առատօրէն կը մեկնարանէ Ես. Ը. 9. — Թ. 6, 7. — Իսկ Քրիստոս թէ եւ իրականապէս Էմմանուէլ չկոչուեցաւ, այլ այդ անունը «Մի եւ նոյն է ընդ անուանն Յիսուսի ոչ հնչմամբ, այլ իմաստիցն գորութեամբ» (Տերտուլիոս.), և էականապէս միշտ Էմմանուէլ կոչուած կ'ըլլայ Քրիստոս, երբ մէն մի հաւատացեալ սրտագին կը գոչէ առ նա. «Տէր իմ եւ Աստուած իմ»: — «Ոչ ասաց՝ երբ ԿՈՅՈՒՆ, այլ ԿՈՅՈՒՆ ՅԵՆ թագուաւ, այսինքն է ըստ իրացն ի գլուխ Ելանելոյ դնէ զԷմմանուէլն անուն, Բանգի սովորութիւն իսկ է Գրոց, ըստ դիպելոյ իրաց ինչ՝ նոյնպէս եւ զանուն իրացն դնել: Եւ արդ ոչ այլ ինչ է իմանալ զկոչեացն զանուն նորա Էմմանուէլ, այլ զի գիտացեն զԱստուած ընդ մարդկան: Միտ եւ յախտելոց եղև ընդ մարդկան, այլ ոչ այնպէս յայնմապէս» (Ոսկ. ձ. Ե.):

19. Յովսէփ քուէնէն արթննալով կատարեղապէս և առանց տատամսութեան հնազանդեցաւ Աստուծոյ դրկած պատգամաւոր հրեշտակին հրամաններուն, և իր քով առաւ զՄարիամ իւր կնիքը. «Տեսանե՞ս զնազանդութիւնն եւ զիմաւան միսսն. տեսանե՞ս զարթուն և զզուարթուն ոգիսն, որ ամենեւին անխիղճ էր... կայր ի հարկի, եւ ունէր սղաս ամուսնայն Տիստուրեանն» (Ոսկ. ձ. Ե.): — Եւ Յովսէփ Մարիամու հետ անարատ կուսական կենցաղավարութեամբ ապրեցաւ մինչեւ որ ծնաւ իր անդրանիկ որդին: Ս. Կուսին Մարիամու մշտնէնական կուսութեան դէմ Տիմ. և նոր անպատկառ հե-

րետիկոսներու դժոխային հայհոյութիւնները կ'ըմբռնէ Ս. Հերոսիմոս՝ ըսելով թէ, մինչ չեւ եկեալ առ միմիանս, մինչեւ ծնաւ, չնշանակէր թէ վերջը եղած ըլլայ այն բանը որ առաջ չեղաւ. նա մանաւանդ որ Մարիամու կուսութեան խանգարումը իր ծնանելէն վերջը իրապէս անկարելի եղաւ. Աստուածորդւոյն ծննդենէն վերջը այն անհաւորէն սրտագործուած տառաքան մարդկեղէն էակի անմեղանքի դարձաւ, զի Մովսէսէն աւելի աստուածայնապէս կը ճառագայթէր անհաւորի և երկիւղապատու Դարձեալ պէտք է դիտել թէ առ հասարակ կը լռենք ինչ որ ստոյգ է, ու կ'ըսենք ինչ որ տարակուսական է. և Աւետարանին լռեց թէ ծննդենէն վերջը անաղարտ կոյս մնաց, զի այս անվիճելի աստուածութիւն էր. սակայն ապացուցանելու համար որ Քրիստոս երկուսուր հայր չունեցաւ, հարկ դատեց իր ճորդ նախապէս կոյս ըլլալը այլեւայլ ձեւերու տակ կրկնել. — «Աստ ՄԻՆՉԵՆԻ աւելով, զառաջին անառաւորիւն Կուսին նախ քան զԷմմանել յայտ առնէ, եւ երբ այս միսս իմանալ նոյնպէս: Ձի որ ինչ կարեւորն էր երբ ի նմա՛ն ուսանել, զայն ինքն ասաց, երբ անառաւ էր Կոյսն ցծնուցն. եւ զոր ինչ յետ այն ի նորա ասելոյ անի պարս էր երբ իմանալ, զայն երբ երող ճանաչել: Ձի չէր ինչ օրէն՝ ինչ լինելոյ մայր այնպիսի անագին ծննդեան, եւ նորագործ եւ չգնաղ երկանց արժանի լինելոյ երկինց, երբ յայլ ինչ մտաբերիցէ: Նա եւ Յովսէփայ արդարութիւնն յետ ի վերայ հասանելոյ այնպիսի սխալելի ծննդեանն, չհաւանէր հաղորդել ի խառն ամուսնութեան: Ձի թէ էր, եւ մերձեալ էր ի նա, եւ ունէր ի կարգի կանանց ապա զիսորդ իբրեւ զանվերականութիւն՝ որոյ ոչ ուրեմ ոք զանկիցի, անկէր յանձն առաւելիցն, եւ հրաման տայր զի յիւր տուն անկիցի» (Ոսկ. ձ. Ե.): Դարձեալ պէտք է դիտել թէ այս ոճը Ս. Գրոց մէջ անկարգաւոր կը գործածուի այսպիսի պարագաներու մէջ. եւ ոչ իրեւ անհրաժեշտ առնչութիւն երբ Աստուած ըսաւ առ Քրիստոս՝ «Տեսէ՛ իմ աչ կոյմս, մինչեւ որ քու բեւանջեալ քու ռեքերոյ պատուանդան ընել», կրնայ իզականապէս թէ՛ Ուրեմն անկէ վերջը Քրիստոս այլ ևս աշակերտը չպիտի նստի. մանաւանդ թէ փառաւորագոյն ևս և անանց յաղթանակաւ. ոչ այդպէս և Կոյսը իւր ծննդեան պերճագոյն ևս կոյս մնաց: Կրնայ ճամբմատուիլ՝ մինչեւ բառին համար. Ծննդ. Ը. 7. — Սղմ. ՀԱ. 7. և շատ ուրիշ տեղեր, որ չնշանակէր թէ գործը վերջը կատարուած ըլլայ: — Իսկ Քրիստոսի եղբարք ըստ աղբիւրն (Մով. ԺԲ. 46, 47. — Մով. ԺԳ. 31, 33. — Լուկ. Ը. 49, 50), ճատաւոր ազգականներն եղան, ըստ սովորութեան Հրէից, և որոնք՝ աս պատճառաւ, ոչ երբեք կ'ըսուէին որդիք Յովսէփայ կամ Մարիամու: — Եւ Յիսուս կ'ըսուէր անհրաժեշտ, այս է՝ միակ որդի. Հմմ. Երբ. Գ. 22. — ԺԳ. 21, ևն.: — «Ոչ նառապայքն նուագեցուցանէ զայն՝ ծառութիւն աստեղն, ոչ Որդին զանապականութիւն Կուսի մօր» (Ս. Բեռն.):

20. Ծննդենէն ութ օր վերջը թլփատելով Աստուածային Մանուկին անունը՝ կոչեցին ՅԻՍՈՒՍ. Լուկ. Բ. 24. — Հմմ. Գործ. Դ. 10, 44: (Շարունակելի) Գ. Վ. ԹԵՐԶԻՊՈՇԵԱՆ



# ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՒՆԷՒ

## ՏՕՆԱՅՈՅՑ

|            |                                                                                       |
|------------|---------------------------------------------------------------------------------------|
| Փետրուար 9 | † Կիր. դժ. Բ. Բառասնորդաց                                                             |
| 10         | Բշ. րկ. ը. or Մեծ Պահոց                                                               |
| 11         | Դշ. ամ. ր. »                                                                          |
| 12         | Դշ. ակ. ժ. »                                                                          |
| 13         | Եշ. լմ. ժա. »                                                                         |
| 14         | Ուրբ. րկ. ժր. »                                                                       |
| 15         | Շք. գժ. ժգ. » — Ս. Կիւրղի Ե-<br>րարից. Հրայ. ին եւ միւս Կիւրղի<br>եւ մօր նորա Աննայի: |

Ս. ԿԻՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ.—  
Երեւելին ի Հարս և մին՝ Եկեղեցւոյ տասուերկու վար-  
դապետներէն, Ս. Կիւրեղ Երուսաղեմացին հռչակաւոր  
եղաւ թէ՛ վարդապետութեամբ և թէ՛ մաքուր կեն-  
ցադավարութեամբ: Երանելին՝ ծնած յերուսաղեմ  
315, կատարելապէս Քրիստոնեայ դաստիարակու-  
թիւն մը առած էր որմէ առհասարակ կախուցն ունի  
հաւատացելոյն բարի կամ վատթար ապագան. որու  
համար պատասխանատու են ծնողք: Նա ընտրեց մի-  
այնակեացի վիճակը իւր ծաղիկ հասակին մէջ. և  
զարգացաւ յաւաքինութիւնս, և անպատմելի կեր-  
պով հմուտացաւ Ս. Գրոց ուսման, և քաջ հան-  
դիսացաւ նաև արտաքին փրկսփայլութեան մար-  
դանաց մէջ. այնպէս որ Երուսաղեմի Մաքսիմոս խոս-  
տովանող Եպսկ. Լուչեց զինքը ի քահանայութիւն,  
յամին 335. և իսկոյն իրեն յանձնեց առաջնակարգ  
քարոզչի պաշտօնը: Այսաւ ուսուցանել հաւատա-  
ցեալները, հրահանգել երախտները որ ամինուստեք կը  
դիմէին՝ ի Յորդանան մկրտուելու համար, և կարկե-  
ցնել ամէն տեսակ հերետիկոսները, մանաւանդ ա-  
րիոսեաններն և կիսարիոսեանները որոնք աւելի քա-  
սակար էին իրենց կեղծաւորաբար ուղղափառութիւն  
ցուցադրելուն պատճառաւ: Մաքսիմոս Պատրիարքը  
350ին մեռնելով, Ս. Կիւրեղ կարգուեցաւ Հայրապետ  
և այնուհետեւ անդադար կը յանդիմանէր ու կը  
յաղթահարէր հերետիկոսները, յայտնի և անպատը-  
ռակ, և շատ մոլորեալներ դարձի կը բերէր: Այն  
ժամանակներն էր, 352ին, Մայիս 7, ժամը 3ին, որ  
Ս. Խաչը հրաշալի եղանակաւ երեւցաւ Գողգոթայի  
վրայէն երկարելով մինչեւ Զիթենեաց լեռը, նշուլա-  
գեղ և շողարձակ իրեւ ծիածան. ամբողջ քաղաքը  
երկեղածութեամբ և ակնապիշ զիտեց աստուածա-  
հրաշ տեսիլը որ տեւեց մէկուկէս ժամէ աւելի:  
Ուրիշ անգամ մըն ալ նոյնպէս երեւցաւ Ս. Խաչն  
աստեղազարդ ճառագայթներով: Այս հրաշքները

հռչակուեցան ընդ ամենայն աշխարհ, և շատ Հրե-  
նայք և աղանդաւորք դարձան ի ճշմարիտ կրօնս Քր-  
իստոնէութեան: Սակայն չարին մահաւոր շատ բան  
կրեց սուրբը, օրինակելի և անսպառելի համբերու-  
թեամբ: Կիսարիոսեան Ակակիոս Եպսկ. ին սաղրանօք  
նախ աքորուեցաւ Կոստանդ Կայսրէն ի 362, և Յու-  
լիանոս վերադարձուց իր աթոռը՝ 364ին. երկրորդ  
անգամ վատրանդի զրկուեցաւ չարադանդ Վաղէս  
Կայսրէն, 367, և մնաց յաքորս շուրջ տարւ տարի,  
ամէն կերպ նեղութիւններով որոնց տարաւ ճշմար-  
տութեան պաշտպան կանգնելուն համար: Գրաստիա-  
նոս և Մեծն Թէոփոս Կայսրք դարձուցին զինքը  
փառաւորութեամբ իր աթոռը 378ին կամ 379ին.  
բարի ժողովրդեան ուրախութիւնը չափ չունէր. և  
Սուրբը նոր եւանդով սկսաւ մտքել իր հօտը՝ եր  
բացակայութեան ատեն սպրդած մտած մոլորու-  
թիւններէ:

Եկեղեցական պատմութեան մէջ շատ երեւելի  
ուրիշ հրաշք մը ալ հանդիպեցաւ Ս. Կիւրեղի Հայ-  
րապետութեան օրով: Հրեայք առիթ առնելով Յու-  
լիանոս Ուրացոյի չարութիւնէն, հրաման ուղեցին Ե-  
րուսաղեմի տաճարը վերականգնելու. ուրախացաւ  
Յուլիանոս և Քրիստոսի կանխատեսութիւնը սուտ  
հանելու սատանայական գիտումով, ոչ միայն հրա-  
ման տուաւ, այլ և արքունական գանձէն զրամական  
նպաստներ ալ խոստացաւ. և Հրեայք մեծաւ ցըն-  
ծութեամբ ձեռնարկեցին գործոյն: Հնաւց մնացած  
հիմքը քակեցին, նորեք փորեցին, ատաղձներ պատ-  
րաստեցին. սակայն նախ զարհուրելի մրիկ մը ցրուեց  
ամէն բան և գործաւորներու տները փլցնելով ա-  
նոնցմէ շատերը սպաննեց. ապա գետնէն բոցեր ցայ-  
տելով հալածեց զամէնքը՝ օրերով. յուսահատ և ա-  
մօթապարտ մնացին չարանէնդ հրեայք և Յուլիանոս,  
որ և աստուածաստատ պատժօք աստեղեցաւ ի Պար-  
սիս: Այս առիթով ալ զարմանալի դարձեր եղան  
Հրէից բաղմութեան և հերետիկոսաց: Ս. Կիւրեղ  
ներկայ գտնուեցաւ նաև Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն 450  
Հայրապետաց, մէջ՝ ուր դատապարտուեցան հոգե-  
մարտ Մակեդոնեանք: Ս. Կիւրեղի հոգեբուղի  
վաղապետութիւնը շատ հռչակ հանեց. իրենն է ե-  
րեւելի Կոչումն Քննալուրեան գիրքը, Քրիստոնէական  
Վարդապետութեանց ճոխ և գեղեցիկ մեկնաբանու-  
թիւնը: Ս. Կիւրեղ սրտագին բարեկամութեամբ  
կապուած էր իր ժամանակին երեւելի Սուրբերուն  
հետ, յորս էին Ս. Աթանաս Մեծն, Սիղուանոս Տա-  
րսի, Ս. Միլիտոս Անտիոքայ, Ս. Գր. Նիւսացի,  
եւ այլն: Ս. Կիւրեղի հանգիստը գիպեցաւ յամին  
386, Մարտ 18:



**ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ  
, ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐՔԷՆ**

ԳԻՐԲ Ա.—ԳԼ. Գ.—ՀՕՍԱՐՏՈՒՄԻՆ ՎԱՐՂԱՎԵ-  
ՏՈՒՄԵԱՆՐ ՎՐԱՅ:

( ՇԱՐ. )

Այն մարդը որուն ամենայն ինչ մեկ է, եւ որ ամենայն ինչ ի մի կը վերածէ, եւ ամենայն ինչ ի մի ուն կը ծնան, կրնայ անյողոյդ սրտով մնայ, եւ իւր դադորեն հանգչի յԱստուած:

Ո՛վ ճշմարտութիւնը Աստուած, միացո՛ւր զիս Բեգի հետ մշտնջենաւոր սիրով:

Սոքայ կը ծանձրանաւ շատ քաներ կարգաշէն ու շնորհք. ի Բեգ է այն ամենայն գոր կ'ուզեմ ու կը փափայիմ:

Թող լոնեն ամեն վարդապետ, պապանձիկ բովանդակ արարածներ Բու մեծփայեղութեանդ առջեւ, Դո՛ւ միայն խօսէ ինձի:

Որչափ ներանձնացեալ է մեկը եւ ի ներմուտս պարզուած ու մաքրուած է, այնչափ շատ ու բարձր քաներ կ'իմանայ անաշխատ, խնդի ի վերմուտ կ'ընդունի իմացողութեան լոյսը:

Մաքուր, պարզ, եւ հաստատմիս հոգին շատ գործերու մէջ չի ցուիր, խնդի ամեն ինչ ի փառս Աստուծոյ կը գործէ, եւ կը ճգնի զինքն մաքրել անձնասիրութեան:

**ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՎԱԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԱՐՔԸ**

Տրապիզոնի Կաթողիկէ մեկ անհաստեմ կ'ընդունինք հետեւեալ նամակը:

Տրապիզոն, 10/23 Յունվ. 1913

Ամսոյս 5/18ին անշուշտ Տրապիզոն հասաւ Արհի. Յովհ. Եպսկ. Նազլեան, վիճակաւոր Տրապիզոնի, եւ իջեկանեցաւ. Վեր. ՀՀ. Միթիթարեանց տունը, որոնք իր մասին վարուեցան արտաքոյ կարգի ազնիւ հիւրանմանութեամբ: Պատուական Տեսուչն՝ Հ. Ներսէս Վ. Տիրացուեան հրաւիրած էր զինքը, եւ գնաց շոգեհաւէն ընդունեցաւ Արհի. Եպսկ. Վ. Վիճակաւորին գալստեան պատճառը, որչափ կ'երեւի, առանձնական գործերու կարգադրութիւնն էր գլխաւորաբար, եւ տեսնել մանաւանդ տեղւոյն հասարակութեան վիճակն, որուն ծոցէն աստեղ մը ի

վեր հակակեղեցական աղմուկը շատ կը դըրձրէր: Սակայն տեսաւ ինքն ալ եւ ստուգեց թէ, ինչպէս այլուր՝ նոյնպէս հոս սակաւաթիւ ոմանց գործն է ամբողջ ժխտին. ժողովրդեան պատուաւոր եւ ազնուագոյն դասակարգը եկեղեցւոյ կողմն է՝ պատրաստ հաղանդելու Ս. Քահանայապետին եւ հետեւաբար ընդունելու անկից զրկուած Եպիսկոպոսը: Ասոր ապացոյց տուին այցելութեան գալով եւ բացայայտօրէն յայտարարելով որ պատրաստ էին հարկ եղածն ընելու հոս պահելու համար Եպիսկոպոսը: Երեւան եկաւ այս լաւ տրամադրութիւնը մանաւանդ տգեղ միջադէպի մը առթիւ:

Ն. Արհիպատուութեան գալուստը լըսելով Տեղւոյս երեք թեմական քահանայք փութացեր էին այցելութեան. այդ առթիւ բաղձանք յայտնեցին Ն. Արհիպատուութեան որ յաջորդ օրը ըստ Հ. Տ. Յայտնութիւն ըլլալով՝ ձայնաւոր պատարագ զուրցէ, ջրօրհնէքը կատարէ եւ քարոզ մը խօսի: Ն. Արհիպատուութիւնը՝ եթէ այդպէս պատշաճ կը տեսնէք, ըսաւ, կ'ընդունիմ. անշուշտ ժողովրդեան ալ միտիթարական պիտի ըլլայ: Քահանայք շատ լաւ կ'ըլլայ ըսելով կ'երթան հարկ եղած պատրաստութիւնները տեսնելու: Կէսօրէն վերջը Կուսակալին կողմանէ Կուսակալութեան թարգմանը կու գայ հաղորդելու Ն. Արհիպատուութեան որ հասարակութեան կողմանէ երկու հոգի եկած բողոքած են Կուսակալին մօտ իր հայրապետական պաշտամունքը կատարել ուղեւոր մասին. եւ հետեւաբար յայտարարած են որ այդ առթիւ մեծ խռովութիւն պիտի ելլէ. ուստի Կուսակալը իրեն կը զեկուցանէ ետ կենալ այդ պաշտամունքէն. եւ հակառակ պարագային, կ'ըսէ, ինք (Եպիսկոպոսը) պատասխանատու պիտի մնայ ըլլալիքին: Ն. Արհիպատուութիւնը կը պատասխանէ թէ՝ ճեմ իրբեւ Մուրախաս եկած չեմ, այլ իրբեւ Կաթողիկէ Եպիսկոպոս թեմական, Պատարագ եւ եկեղեցական պաշտամունքը զուտ հոգեւոր հանգամանքիս վերաբերելով չի կըրնար զանոնք խափանել կառավարութիւնը, որ կարող է ամէն անկարգութիւն եւ խռո-



վութիւն զսպել . ուստի կը խնդրեմ, ըսաւ, որ նկատի առնելով կրօնական պաշտամանց լիութիւն ազատութիւնը՝ հանրային անդորրութեան համար հարկ եղածը ընէ . հակառակ պարագային՝ գրաւոր եղանակաւ տայ իր մերժումը» : «Գրաւորապէս չ'ընեմ, ըսաւ թարգմանը, վասնզի զՁեզ պաշտօնապէս չի ճանչնար» : Ն. Արհիապատուութիւնը կը պատասխանէ . «Եթէ զիս պաշտօնապէս չի ճանչնար՝ այսպէս պաշտօնապէս թարգմանի ձեռք զեկոյց ալ զրկելու չէր» : Թարգմանը՝ «Այսպէս կը հաղորդեմ» ըսելով, Ն. Արհիապատուութեան ձեռքը կ'առնուէր կ'ամբուրէ եւ կը յայտարարէ իր Հայ-Կաթողիկէ ըլլալը եւ իր Եպիսկոպոսը ճանչնալն ու ընդունիլը, ու կը պախարակէ երկու անձանց յանգնութիւնը՝ որ յանուն ազգին այս նախատինքն ըրած էին Կաթողիկէ Եկեղեցւոյ յանձին իր Եպիսկոպոսին որ Ս. Քահանայապետէն զրկուած էր :

Ն. Արհիապատուութիւնը ուշ ատեն իր փոխանորդն ու քաղաքին հոգաբարձու քահանան կը զրկէ Կուսակալին՝ նոյն յայտարարութիւնը ընելու համար, եւ պատասխան կ'ընդունի որ Կուսակալը չէր երաշխաւորիր պաշտամունքի ազատութիւնը :

Ասոր վրայ Արհի. Նազլեան Եպսկ. ետ կը կենայ Եկեղեցի երթալէ իսկ . բայց արգելք կը դնէ որ քահանայք ալ ձայնաւոր չ'ընեն . Յաջորդ առաւօտը քահանայից կողմանէ խնդիրք կ'ըլլայ որ Յայտնութեան օրով, քանի մը անձանց երեսէն, բարեպաշտ ժողովուրդը չի զրկուի հանդիսութենէ : Այն ատեն Ն. Արհիապատուութիւնը հրաման կը զրկէ որ հանդիսութիւնք կատարուին այն անգամուան համար :

Սակայն հանդիսութեանց մէջ երբ քահանայք կը յիշեն Կ. Պատրիարքը եւ Եպիսկոպոսը՝ դպիրք չեն յիշեր՝ արգիլուած ըլլալով իրենց Վարչական ըսուած անձանց կողմանէ սպառնալեօք թոշակին չվճարելու : Ահա՛ ուր կը հայի Եկեղեցական կալուածոց մատակարարութիւնը ձեռք ձգելու տենդը՝ աշխարհականաց կողմանէ : Ասոր վրայ՝ Արհի. Նազլեան Եպսկ. կ'որոշէ եւ հրաման կը զրկէ

որ ցորքան այդ մեծ դայթակղութիւնը կը տիրէ՝ ձայնաւոր պատարագ եւ ժամերգութիւն չ'ըսուի . ասոր հետ մէկտեղ Վարչական ըսուած ժողովոյ անդամներուն տուները չ'օրհնուին՝ իբրեւ պատասխանատու պատճառ՝ եղած անկարողութեանց : Այս հրամանը ի գործ դրուեցաւ :

Նախընթաց երեկոյ Վարչականը կը ժողվի եւ (հակառակ իրենց եղած ազդարարութեանց քահանայից կողմանէ) կը վճռէ . 1. արգելուի Եպիսկոպոսին պատարագել հանդիսապէս եւ քարոզել . 2. նոյն իսկ քահանայից արգիլել ձայնաւորը . 3. Եպիսկոպոսական Աթոռը վերցնել Եկեղեցիէն . 4. ընաւ տեղի չտալ Եկեղեցական իշխանութեան՝ այլ մաքառիլ անոր դէմ ցվերջ : Այս որոշումներէ վերջ կը զրկեն Ն. Արհիապատուութեան հետեւեալ նամակը, զոր նա ետ կը դարձնէ առանց բանալու եւ զոր յաջորդ օրը տակը տալով շուկաներու եւ փողոցներու մէջ կը ցրուեն : Ահա պատճէնը .

## Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

Առ Գերապ. Գերապ. Տէր

Տէր Յովհ. Եպիսկոպոս Նազլեան

Անպատեհի կերպով յանկարծ Տրապիզոն եկաք . ինչպէս ո եւ է մէկը որ ազատ է գնալու ուր որ կամենայ : Ուրախ եմ որ մեզ աւելորդ յոգնութիւն չպատճառելու կամիստանա՞նք, Զեր յաւակնած ինչպիսի հիման վրայ փորձ չըլի ուղղակի Առաջնորդարան իջնել . Շնորհակալ եմ :

Հասուցանելով զարժանն .

Ի երկայիւս կու զանք յայտնել Ձեզ մեր մի ուրիշ դիտողութիւնը : Իսկ կը հաւաստենք որ ժողովուրդն է Եկեղեցին եւ Եկեղեցին ժողովուրդինն է : Այս անվիճելի ճեմարեւոյթեան վրայ մենք՝ Վարչ. Ժողովս, իբր պատասխանատու ներկայացուցիչ փաղափս կարողիկէ Հայ Հասարակութեան, կը յայտնենք Ձեզ որ Գոտ, իբր ճիւր մեր փաղափս մէջ եւ իբր Եկեղեցական, կը բոյլատրենք Ձեզ պատարագել իւր պատարագ մեր Եկեղեցւոյն մէջ եւ աղօթել որչափ որ կամենաք, բայց չենք բոյլ տալ որ ձայնաւոր պատարագ մասուցանէք եւ կամ փարգէք Եկեղեցիին մէջ :

Հանգեցէ՛ք քննունիլ մեր յարգանքները .

Ի դիմաց Վարչ. Ժողովոյ Կ. Հայոց Տրապիզոնի

Ատենադպիր

Ատենապետ

ԱՐԻԿ ԳԱՐՍԵԼԵԱՆ

Պ. ՄԱՐԻՄԵԱՆ

Տրապիզոն, 5/18 Յունուար 913



**ԾԱՆՈԹ.**—Սոյն նամակը ուղարկուած էր Նազկեան Եպիսկոպոսին, բայց որովհետեւ նա, ըստ Թէրզեանական վարդապետութեան, չուզելով նանջնալ ազգային խօսանութիւնները, ետ դարձուց զայն առանց բանալու, պարտք դրած եղաւ մեր վրայ որ զայն հրապարակային ձեւով ուղարկենք իրեն:

Այսպէսով այսին կատականայ ըրին ամէն աղղի առջեւ Տեղւոյս Հայ-Կաթողիկէ հասարակութիւնը, որ, խիստ մահացուցուած եղածէն՝ իրենց ցաւն ու զայրոյթը յայտնեցին ըսելով որ քանի մը խռովամիտ ու աննկատելի անձինք ժամանակաց փախկութենէն կ'օգտուէին այսպէս անպատիժ շահատակելու:

Ահա եղածը, որ անշուշտ ցաւալի ըլլալով հանդերձ՝ կը ցուցնէ անգամ մը եւս թէ ներկայ պայքարը որոնցմէ՞, ի՞նչ սկզբունքով եւ որո՞ւ դէմ կը մղուի: Բաց նամակը որ Թէրզեանական կ'անուանէ Կաթողիկէ Վարդապետութիւնը, որ կ'անտեսէ Եկեղեցւոյ Դերագոյն Դիւանը, որմէ անուանուած է Եպիսկոպոսը, որ ըստ Բողոքականաց կը դաւանի թէ «Ժողովուրդն է Եկեղեցին» լաւ կը բացատրէ ամէն բան եւ կարօտ չէ մեկնաբանութեան:

Այսօր Ն. Արհիպատոսութիւնը գնաց Կուսակալին, որ շատ պատուով ընդունեցաւ զինքը եւ մաղթեց որ ամէն ինչ շուտով կարգադրուի:— Աստուած տա՛յ...:

#### ՏՐԱՊԻԶՈՆՅԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԸ

**ԾԱՆ. ԽՄԲԳԻ.**— Աշխարհիս վրայ ամէն արդիւնք պատճառ մը ունի. ասիկա փիլիսոփայական անխուսափելի եզրակացութիւնն է՝ արամարտութեան մէջ առաջնակարգ կամ հիմնական բուժած ճշմարտութեանց: Ուստի պատճառը գնելէն վերջը՝ արդիւնքը ուրանալ կամ տգիտութիւն է կամ չարութիւն: Ըմբոսացան ոմանք՝ հոգեւոր օրինաւոր Իշխանութեան դէմ. անոր իրաւունքները առաւելուր կոխեցին՝ և իշխանութիւնը կապտեցին, յափշտակեցին, Կոդակները պատուելով, իր բնակարանը գրաւելով, իր Կղերանոցի շէնքն յափշտակելով, իր անուան յիշատակութիւնը յեկեղեցւոյ խափանելով, իր հոգեւոր արամարտութեանց դէմ յայտարարութիւններ տպելով և պաշտօնապէս հրատարակելով: Անոր աշխարհական իշխանութիւնն անօրինակ կերպով իւրացուցին, և այդ միջոցով որ և է հասարակութեանց մէջ աննախընթաց վարչական ձեւ մը ստեղծեցին, զայն պարտադրեցին ամենուրեք, և զաւանուներու ըմբոսանքն ալ խախտեցին, և յորդորեցին զանոնք որ Ս. Քահանայա-

պետէն կարգուած և Աստուծոյ օծեալ Եպիսկոպոսները չընդունին իբրեւ Եպիսկոպոս, մերժեն ու վտարեն զանոնք, և իբրեւ պարզ քահանայ միայն թոյլատրեն անոնց թիւ պատարագ գրուցել. աստուածադիր եկեղեցական ամենաբարձր իշխանութիւնը այսպէսով մերժեցին, կապտեցին, նուաստացուցին. քանի դարեւ մէջ Կաթողիկէից կողմանէ նշխորինակ սրբապաշտութիւն մը դեռ տեսնուած չէր: Եւ երբ Քրիստոսի Փոխանորդէն բանադրուեցան, հերձուածող հրատարակուեցան, զայս ալ առ ոչինչ գրեցին, բանիւ և գրով, պէսպէս անհիմն պատճառաւոր, և շարունակեցին ապստամբութեան մէջ, և անխմանալի և ամբարտաւան յամառութեամբ շարունակեցին նոյնպէս իրենք գրեցին. նուազ ու անկեղծ Կաթողիկէ անուանել, Եւ այս ամէնը ըրին ժողովուրդ անունը յառաջ քշելով: Այս առաձգական բառը, իրականին մէջ, կը նշանակէր միայն իրենց գործիք՝ անպատկառ և անօրակելի մարդոց խմբալ մը, որոնց իրենցմէ ոմանք պարագլուխ կեցան՝ Սուրբ Տաճարները պղծելու՝ յարձակումներով, հոյհոյանք, սեղանակապտութեամբ. մղեցին զանոնք Եկեղեցական Պետերը նախատելու՝ բանիւ և գործով և... թուրքով. Նոր-Տոմարի կոդակին դէմ իբրեւ թէ պատճառաբանեալ պաշտօնական յայտարարութիւններ հրատարակեցին և պաշտօնական վայրեր փակեցուցին: Այս առթիւ Եկեղեցիներու վրայ գործուած անբաւելի յարձակումներու և ըստմատենակ սրբապաշտութիւններու կազմակերպիչները և պարագլուխները ԻԲԵՆՔ եղան, լոյս աշխարհի առջեւ. իրենց պաշտօնական և Եկեղեցիներու դրամով նպաստընկալ թերթին մէջ, որ անխիղճ կրքոտութեան միակ նմոյշը դարձաւ, անհնախի նախատանաց տեղատարափ մը սահմանեցին կանոնաւորապէս՝ շարաթը երկու անգամ, ամէն քրքութեանց դէմ անխտիր, կարելի եղածին չափ ցած ու վատ ոճաբանութիւններով. հոն շարունակաբար գրգռեցին ժողովուրդը ոտք ելլելու, հրաւերներ կարդալով նոյն իսկ կիներու. հոն՝ Քահանայապետէն ճանչցուած ու պատուուած Կաթողիկոսական Իշխանութիւնը ուրացան և այսին կատականայ դարձուցին. հոն՝ Յիսուսի երկրպագելի աստուածային Ս. ՍԻՐՏՏ անպատկառ հայհոյեցին. հոն՝ Խաչի ճանապարհի պատկերներուն դէմ գրգռիչ յօդուածներ գրեցին՝ պատկերամարտ ոճերով, ողբալի յանդգնութեամբ. հոն՝ Քաղկեդոնի Ս. Ժողովը դիտումնաւոր թելադրութիւններով արհամարհեցին, աներկիւզ կոթիտելով ամէն սրբութիւնները:

#### ԱՀԱ ՊԱՏՃԱՌԸ

Եւ երբ այս ահաւոր միօրինակ պատճառէն յառաջ եկաւ արդիւնք մը, զայն ուղեցին ուրանալ. կըրակը դրին, հրգեհն ուրացան. հարուածը տուին, սպանութիւնը մերժեցին. թոյլը մատուցակցին, մահաւորութեան տուալտանքէն յաւատ կացին. դատաւ վճիռը արձակեցին, Պիղատոսի պէս ձեռքերին լուացին. Մաքլէթի նման մասներուն յաւիտենապէս



անարբելի արեան րիծը անիծեցին: Քանզի ապաքէն քստմնելի էր արդիւնքը. այդ ծանօթ խմրակը, իրենց կրքերուն ու Եկեղեցեաց մէջ և այլուր ապօրինաւոր արարքներուն ահագնագոյ ալդ ժամօքը, յաւէտ ողբալի թշնամութեանց նիւթապէս գործադրիչ այդ անխոստով անելի գործիք-մարմինը, զոր Վարչական ըստած ժողովը իր նոյն իսկ ողբացող յայտարարութեան մէջ միայն կ'անուանէ անխորհուրդ, անխոհեմ երիտասարդներ !!! — այդ խմրակը տէրունական օր մը, գողերու պէս աղաղակով սպլոնեցաւ Ս. Տաճարի մէջ, սպառնալիքօք կարկեցուց սպասարկու պաշտօնեան, և պատկերամարտ և հրէական սրբապղծութեամբ Քրիստոսի Ս. Չարչարանաց երկրպագելի պատկերները վար առաւ, նախատեց, հայհոյեց, աքացիներով ջարդ ու փշուր ըրաւ. և այս սրտակեղեք աւերակները թողլով հոն, մեկնեցաւ ի բաց... Ճիշդ այդպէս ըսած էին, կենդանւոյն վրայ, խտապարանոց և անհաւան հրեայք, որոնք համապաղ Հոգւոյն Սրբոյ նախակ կը կենային... անոնց խմրակն ալ, կապեց զՔրիստոս, խոշտանգեց ըստանքներով, աքացիներով, թուքերով, ապատկերով, խարաղաններով, խաչով, հայհոյանքով... և խորտակեցին Անոր ցանկալի կեանքը և աւերակ դարձուցին Անոր աստուածային դիմագրծերը, սրբանուէր Պատկերը: Ահա երկու խմրակները Պժգալի և մահասարուռ էր այս, այդ արդիւնքը. բայց ով որ կը դնէ պանաւը, պէտք է ընդունի արդիւնքը. անողոքելի է այս ճշմարտութիւնը... և ո՛վ գիտէ թէ այդ վերջինը պիտի ըլլայ արդեօք արդիւնքներու... Ինչ կ'արժեն Վարչական ըստած ժողովոյ ճիգերն՝ այս արդիւնքները մերժելու, մինչդեռ իրենք պատրաստեցին. իրենք էին Եկեղեցեաց բակերուն մէջ ճառախօսողներն, իրենք էին Կոնդակ պատեւելու համար դասի մէջ խորանի առջեւ քահանայից վրայ յարձակողները, իրենք էին Եկեղեցեաց մէջ խռովող առաջնորդները, թո՛ղ դուրսը, ըբմեկներու մէջ կազմակերպութիւնները. ևն. և հիմա ի չքմեղս կ'ըլլան կեղծաւորաբար, յիշումադուրիւն է այդ... Հապա ինչ պիտի ըսեն Եկեղեցիներու բանալիները պահողներուն, Ս. Յակոբայ Մատուռը փակողներուն, ազուհացից առթիւ անոր վարագոյրը գոցելի արգիլողներուն. այս գործերն ալ յափըշտակութիւն իշխանութեան և հետեւաբար սրբապղծութիւն չեն միթէ... Բայց ո՛րչափ մերժեն այդ արարքները, պիտի չկարենան առջևն առնուլ. որո՞ք պիտի աճի և պողարերէ:

Ահա անդին Տրապիզոնը: Մինչ ժողովրդեան ահագին մեծամասնութիւնը իր աստուածամուրք Եպիսկոպոսին ամենայն յարգանք և հնազանդութեամբ կը վերաբերուին, քանի մը ապստամբներ, Վարչական անունով, և Պոսի Վարչական ըստած ժողովէն պաշտպանուած, կը յանդգնին Քահանայապետական ամենաբարձր իրաւասութիւնը գործածել, Քրիստոսի Փոխանորդութեան իրաւունքը յափշտակել: Ասոնք էին ցանգ յեղեղողներն թէ՛ մենք Եկեղեցական գոր-

ծերու չենք խառնուիր... Անհնազանդութեան անհրաժեշտ պտուղներն են ասոնք... Ուստի այդ միջանի ըմբոսաներ, 1. Հրամանագիր մը կը զրկեն իրենց օրինաւոր ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ. — 2. Այդ յանդուգն և կոշտալիչ հրամանագիրը բացարձակ է, վնասկան ու վերջնական. — 3. Իր Եպիսկոպոսութեանը անկողապետելի նկարագիրը, որ տրուած է Ս. Քահանայապետէն և շնորհուած ու գրողմուած ի Հոգւոյն Սրբոյ, կ'անուանեն՝ Ձեր յաւակնած սիսղոսը. — 4. Կը մերժեն զինքը Առանցնորդարանէն, այսինքն Եպիսկոպոսի սեփական տունէն. — 5. Կը հաստատեն թէ՛ ԺՈՂՈՎՈՒԴԻՆ է ԵԿԵՂԵՑԻՆ, անաթեմատիկով շանթահարուած հերետիկոսական յայտնի նախագատութիւն. — 6. Կը յարեն թէ՛ Եկեղեցին ժողովուրդինն է. ուրիշ մոլորութիւն վարդապետական, իրաւունքի և ուղղման պէս արամադրելու իմաստով. — 7. Եւ այս մոլորութիւնները կ'անուանեն անվիճելի ճշմարտութիւն — 8. Կը գործածեն սա ոճը. «ՄԵՆՔ, Վարչ. ժողովս... ԿԸ ՅԱՅՏԵՆՔ ԶԵՁ ՈՐ ԴՈՒՄ... Կը ԹՈՅՂԱՏՐԵՆՔ ԶԵՁ» (մի՛ նայի՛ք շարադրութեան): Տեսէ՛ք ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ. Քահանայապետը միայն կրնայ ըսել այսպէս... — 9. Եւ կ'ըսեն. կը թղթարենք Ձեզ ՊԱՏԱՐԱԳԵԼ!!! — 10. Եւ պի՛ն քիւ պատարագ, ՄԵՐ Եկեղեցւոյ մէջ. — 11. Եւ աթոքել. — 12. Բայց ՁԵՆՔ ԹՈՅԼ ՏԱՐ որ ձայնաւոր պատարագ մատուցանէք. — 13. Եւ կամ ՔԱՐՈՉԵՔ Եկեղեցիին մէջ:

Ըսէ՛ք անկեղծօրէն, թէ այդ մարդիկը հեթանոս կամ անջատեալ հերետիկոս ըլլային, ինչ աւելի կրնային ընել: Եւ Մենմուա ուսուցիկ ըստերով կը գովաբանէ այս ամէնը...

Պատճառը դնողը, պէտք է արդիւնքն ընդունի անողոքելիօրէն և անխուսափելիօրէն:

Երբ պիտի իջնէ այս սարսաղագեցիկ ողբերգութեան վարագոյրը...

Սարսափեցէ՛ք և աղօթեցէ՛ք, ո՛վ ճշմարիտ կաթողիկէս:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### Հ Ռ Ո Ս Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Ն Ա Ր Հ

Արաղան Քահանայապետը առանձին ունինդրութեան ընդունեցաւ Ն. Վ. Եակով՝ Գերմանիոյ Կայսրութեան Արտաքին Գործոց Նորընտիր Նախարարը, որ առաջ իտալիոյ մօտ՝ Գերմանական դեսպան էր:

Քահանայապետական ունինդրութենէն վերջը Ն. Վ. այցելութիւն տուաւ Վրեմաշուք Մէրի տէլ Վալ Կարդինալին և յաջորդ օրը մեկնեցաւ Պերլին իր նոր պաշտօնին ձեռնարկելու:

\*. Ն. Կ. Վ. Սպանիոյ Թագաւորը Վատիկանի մօտ գեսպան անուանեց Պ. Գալպրիճոն, նախկին ա-



դատական նախարարը՝ Սուրբ Աթոռը՝ այս անուանումին տուաւ իր բարձր հաճութիւնը:

Ազանիական կառավարութեան և Ս. Աթոռին միմեկին տեղի ունեցող դիւանագիտական պայքարին վերջ գտնելը լաւ տպաւորութիւն թողուց Աթոռի ղեկէ միջավայրերու և Վատիկանի շրջանակներուն մէջ: Պիոս Ժ. Սրբազան Քահանայապետը այս մասին մեծ զոհունակութիւն յայտնեց: Այս իրողութիւնները՝ Սուրբ Աթոռին ցարդ բռնած ընթացքին ամենակէն նպաստաւոր ազդեցություններ կը նկատուին:

Ապագայի մասին, նկատի առնելով մէկ կողմանէ Ազանիայ նոր կառավարութեան ոգին, որ ըստ բաւական երևան կու գայ Վատիկանի մօտ դեսպան մը անուանելու փութալէն, և միւս կողմանէ Ս. Աթոռին Ազանիայ հանդէպ ունեցած նպատաւոր ծանօթ արամադրութիւնները, վստահ ենք որ դիւանագիտական յարաբերութեանց վերակիր շատ գեղեցիկ արդիւններով բեղուն պիտի ըլլայ:

Գարձեալ կը կարծուի որ Արհ. Բակոնէզի, Միւրայի Տիտղոսաւոր Արքեպիսկոպոսը՝ պիտի անուանուի Մարտիոս Քահանայապետական Դեսպան:

Բակոնէզի Գերապայծառը ունի այժմ Գլոմպիայի Առաքելական Նուիրակի և արտաքոյ - կարգի պատուիրակի տիտղոսը:

Ահա՛ Ազանիայ եկեղեցական քաղաքականութեան այս նոր բարելոջումին պատճառաւ է որ պահպանողականաց Պետ Պ. Մաւրա իր ծանօթ հրաժարականը ետ առաւ:

\* Հռոմի գրաքննական Ս. Ժողովը կը ծանուցանէ թէ ԱԼՈՒԶԻՈՍ ԻԶՈՖ, ԹՈՎ. ՏԷ ԳԱԻԶՈՆՍ ԵՒ ՎԱՂԵՐԻՍԱՆՈ ՖԵՐՐԱԶԶԻ գովելի եղանակաւ հրատարակեցան իրենց գիրքերը՝ արգելող վճիռներուն:

\* Պաւլոսի Նախարարապետը Պ. Հերզելն Առաքելական Դեսպանին, Յրիւշկիրդ Գերապայծառին աջակցով՝ անհամբ յանձնեց Պատիկ Կարգին մեծ խաչը դրն. Արհ. Կառավարութեան շնորհած էր Ն. Ա. Բ. Լուդովիկոս Խոնամակալ իշխանը:

#### ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

Մեծ - Պահոց ամէն կիրակի օրերը Աւագ Թիմի եկեղեցիներուն մէջ իրիկունները ըստ սովորութեան քարոզ պիտի տրուի, Ժողովուրդը Զատիկական պարոքի ըստ արժանւոյն կատարման պատրաստելու համար:

\* Պիլեծիկի երեւելեաց մէկէն կ'ընդունինք հետեւեալը:

Մէնուայր Անպար կազմար 5/18 Յունվ. 1913 թաւիսի նախկինէն Պիլեծիկէն այսրոր պիւ մայիւմար շու եօլա եազրօր:

Պիլեծիկ մերխասար Յովսէփ Ծ. Վ. Պարիկեան, մերիինէն այսրոր մայիւմար իւզերինէն քիսէ այինլէրինէն եկն իմար մուհիպինէն իմաւ էրմէն մէնպուր օլմաւ սր: Գաթիլի նմաար պուր զապուլ էրմէնի օլմաւ սրման, վարդապէս Ասիքանէն կիրմէն մէնպուր օլմաւ սր:

Կերչի պէոյլէ պիւ շէ կէչի իսէ տէ, պուրն իւվէսի տէ վար. շէոյլէ քի մուքասարրաւ շիքայէր իքսիք, միւշարիլէն մերխասարանէն կէլի, ուզուն միւսէք միւզալէրէն սօրա քիլիսէնին անախարարըն այսրգ վէ տէնի սապրգ Ս. Անոն եօրմուլարմա Թիլիքեան Անոն էմէնիլին իսիքանար ռուր իչին իմար մուզարրէր օլմա մեւիքեանուր ձալմաուր պասարազ վէ պաւսօր եկնի տմաւ իւզրէ սուրէթի մուքանքանէն իմաւ էլիքիք. մէգիւր այինի ռուհանիլին մէնի իմար իչին պիւ գալ մուխալիքին քարաքանէն սիւրաւարմար իղմալ իսիլիք իսի իսէ տէ, լազմ կէլինի քէսարիք վէ էմէնիլիք տէ իսիքալ իսիքէ, միւքի նմաարմար իսպու քէսիլիպար ռուհանիլէն մանրում պրազմարգ:

Լուրմէն Արազանգ կազմարմա պուր տէն իսիլիք քի, Պիլեծիկ Գաթիլի նմաարմա պուլման պիւ գալ մուխալիքին գարօր հասլէրինի պիլիքէնէն քիսիլէր տէ վար օլմաւրն քիսիլի Գաթիլիքիլիք անախարար:

#### Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Մ Ե Ր

Հինգշաբթի օրը Յունուար 30 ին, կէսօրէն վերջը, Ժամը 3ին մօտերը Արտաքին Գործոց Նախարարը՝ Իշխան Սաիտ Հայիմ Ժաշա՝ Աւստրիական դեսպանատունը երթալով Մարքիզ Բալլադիլինին յանձնեց Մեծ Տէրութեանց ծանուցագրին պատասխանը, որուն մէջ Բ. Դուռը իր հաշտարար ոգին արգէն անժըռտի ապացոյցներ տուած ըլլալը շեշտելէ վերջը, կը յայտնէ թէ ինք տամալիւր է Մեծ Տէրութեանց որոշման քողով քիսիլիք քաղիքն այն մասը որ կը գտնուի Մարիմայի աջ ալիքին վրայ, իրեն պահելով ձախ ալիքին վրայ գտնուող մասը, որ կը գտնուին միւլիլիքները, թիւրպէսները և պատմական ու կրօնական ուրիշ յիշատակարաններ:

Գալով Արեւիկապոսի կղզիներուն, Կայսերական Կառավարութիւնը ինիլին քոյ կուսայ դիքել տալ որ մինչ այդ կղզիներուն մէկ մասը Տարսանիլի նեղուցին իրենց անմիջական մօտաւորութեան պահաւորով՝ անհրաժեշտ են մայրաքաղաքին պաւսպանութեան համար, միւսները՝ լրացուցիչ մաս կազմելով Կայսրութեան Ասիական տնտեսականութեան ոչ նուազ անհրաժեշտ են Փոքր - Ասիայ ապահովութեան տեսակէտէն ...

Հետեւաբար Բ. Դուռը պիտի կարենաւ հաւանիլ որ վեց Մեծ Տէրութիւններ հանին որոշել պալմանեան գիւնակիցներուն կողմանէ գրաւուած կղզիներուն բախսք. նկատի առնելով վերոյիշեալ խորհրդածութիւնները եւ այն հոգածութիւնը զոր ցոյց պէտք է տալ Տարսանիլի դիրքին ամբողջութեան, ինչ որ, կը կարծէ Բ. Դուռը, Եւրոպական շատ մեծ կարեւորութիւն ունեցող խնդիր մըն է:

Բ. Դուռը այս զոհողութիւնները ընելէ վերջ փոխարձակարար կ'ուզէ որ պետութիւնները Թուրքիան ազատ թողուն իր մաքալին սակացոյցը ուզած ձևով պատրաստելու և դործադրելու մէջ, այսինքն մաք-



սատուրքի հարկերն չորսի յաւելումը կ'առաջարկէ։ Ասկէ զատ կը պահանջէ որ օտարներն ալ ենթարկուին այն բոլոր օրէնքներուն որոնց կը հպատակին Օսմանցիները, այսինքն կը փափաքի որ օտարներն ալ թէմքքիւ տան։ Երբորդ առաջարկ մը ըլլալով՝ կ'ուզէ որ օտար նամակատուները վերնան և քարթիթիւլասիօնները ջնջուին։

Հինգշաբթի չկէօրէն վերջը ժամը 3 ու կէսին Մահմուտ Շէվքէթ փաշա բոլոր Նախարարները հըրաւիրեց նիստի որ տեւեց մինչև իրիկուն ժամը 7 ու կէսին։ Կարգադրեցան Լոմոսնի Օսմ. լիազօր պատուիրակ Բէշիտ փաշայի և Թէվֆիգ փաշայի հետադիրները ի մասին բանակցութեանց խզման և զինակից պետութեանց տրամադրութեանց։ Իր կարգին Վարչապետը հաղորդեց զօրավար Սալիօֆի հետեւեալ հեռագիրը.

Չինապոլսի բոթօօլին 4րդ յօդուածին համաձայն, զինապաշար լուծուած է. թեմամքիւնի պիսի սկսին 4 օրէն՝ այսօր (հինգշաբթի) իրիկուն ժամը 7ին սկսեալ։

Նախարարաց Խորհուրդէն վերջ Վարչապետը, Պատերազմական, Արտ. և Ներք. գործոց նախարարները կարեւոր հրահանգներ տուին պատկանեալ իշխանութեանց։

Վարչապետը պատասխանեց զօր. Սալիօֆի թէ իր զեկոյցը ստացած է։

Սպայակոյտի պետ զօր. Իզզէթ փաշա, բանակի ընդհանուր հրամանատարի փոխանորդ կարգուած ըլլալով Յունուար 31ին շրջաբերական մը զրկեց բոլոր հրամանատարներուն։

Յունուար 3ին Չաթալճայի և Ալիլիպուլի բացերը զինակիցներու և օսմ. զինուորներու յառաջապահ գունդերուն միջև ընդհարումներ սկսած և հետզհետէ սաստկացած են։ Պուլկարները Յունուար 3ին ուժգին յարձակում մը գործած են Էտիրնէի վրայ։

Էտիրնէի հիւպատոսները խնդրած են պաշարող բանակէն որ կա՛մ թողատուր իրենց հպատակներուն մէկնիլ քաղաքէն և կա՛մ չէզոք վայր մը

որոշուի քաղաքին մէջ օտարահպատակներու համար անբռնաբարելի մնալու պայմանաւ։

Պուլկար ժէնէրալ Բարրիքով հետեւեալը ըսած է. — Էտիրնէէն մինչև Չաթալճա 280,000 զինուոր ունինք. 400,000 զինուոր Էտիրնէի քով. 125,000՝ Տէրքուէն Չաթալճայի գծին առջև. 50,000՝ Մարմարայի եզերքէն մինչև Եգէականի եզերքը։ Ասոնցմէ զատ Պուլկարները իրենց տրամադրութեան տակ ունին 70,000 ըէտիֆ և 15,000 Մակեդոնացի կամաւոր։ Պուլկարիան օրական երեք միլիոն ֆրանկ ծախք կ'ընէ։

Փրանսուա Ժօզէֆ Կայսըրին քննադիր նամակ մը զրկեր է Չարինը Քաղաքական շրջանակներու մէջ մեծ ծանրակշռութիւն կը տրուի այս անակնկալ նամակին։

Նորատունկեան էֆ. Բարիկ մէկնեցաւ ընտանիքով։

Եգիպտոս մէկնեցան Քեամիլ փաշան և նախորդ Շէյխ իւլ Սալամը։

Վիեննա մէկնեցան նախորդ Դահլիճի Բէշիտ և Ապտերաահման պէյերը. նոյնպէս Ալի Քէմալ պէյ։

Ընդ. ապահովութեան տեսուչ կարգուեցաւ Տիվանէի նախկին կառավարիչ Միտհաթ պէյ։

Պուլկարիոյ և Ռումանիոյ միջև համաձայնութիւն կնքուած է պայմանաւ որ Պուլկարիա Ռումանիոյ տայ անոր ուզած հողերը, իսկ Ռումանիա Պուլկարիոյ մասնակցի Թուրքիոյ հետ պատերազմի։

Հակառակ անոր որ քանի մը օրէ ի վեր թընդանօթները վերսկսած են գոռալ թէ Բ. Դրան և թէ մայրաքաղաքիս դէպանական շրջանակներուն մէջ սա հաստատ կարծիքը գոյութիւն ունի թէ շատ շուտով պիտի դադրի պատերազմը, և թէ քանի մը օրուան ընդհարումներէ վերջ՝ երկու պատերազմիկ կողմերուն ալ հաշտութեան համար նպաստաւոր գեւորն մը պիտի պատրաստուի։

Թաավիր Էմէնարի խմբագրապետը սը Ս. Խաչին դէմ նախատական յօդուածներ գրած էր, և որուն դէմ յոյն պատրիարքարանը դատ բացած էր, յանկարծամահ եղաւ։

|                               |    |
|-------------------------------|----|
| Քառոց Յիսուսի չարչարանաց վրայ | 81 |
| Տէր Կովսէսս քանանայ           | 83 |
| Թուրք Հովուական               | 86 |
| Ս. Աւետարանի մեկնութիւն       | 88 |
| Եօթնակ Բիսոպներ               | 90 |
| Տրապիզոնի հակակաթողիկէ արարք  | 91 |
| Տեղեկագրական                  | 94 |

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԿՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Վ. Արձագանց Շաքարաբերքի, Բեռա, Պայրամ փողոց թիւ 5, Կ. Պոլիս



## Ա. Զ. Դ.

Կը խնդրուի պատուարժան բաժանորդներէն, որոնց բաժանորդագրութիւնը կը վերջանայ ներկայ փետրուար 10ին, որ փութան նորոգել իրենց բաժանորդութիւնը, եթէ չեն ուզեր որ իրենց թերթի առաքումը յապաղման ենթարկուի: Իսկ ամիսէ մը պիտի դադրեցնենք թերթ առաքել անոնց որ մինչեւ ցայնժամ բաժանորդագրուած չպիտի ըլլան:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դիկ. արծ. վեցամսեայ՝ 20.—  
մէկ քիւ՝ 1 դիկ.:—Արամանման տար. Տր. 10. վեցամս. 5.—Վհարմունկ կանխիկ են:

ՀԱՍՅԷ.—Կարողիկէ Արձագանց, Բերա, 5 Պայրամ վերջոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Pétra, 5 Rue Baïram 5

Constantinople

---

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԸ.— 1.—Արձագանց կը նրաստակուի Շաքար օրեր: 2.—Խմբագրութիւնս պարտա-  
ւորեալ չէ անպատճառ կամ նայութեամբ նրաստակել իրեն յրկուամ և եւ յօդուամ: 3.—Կեղծանունով յրկուամ  
յօդուամներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրապետին: 4.—Ձեռագիրներ եւ չեն  
դարձուիր: 5.—Յօդուամներու ձեռագիրները պէտք է գրուած թղթի վրայ թուղթին մէկ կողմը միայն: 6.—Ծանուց-  
մանց համար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուին: 7.—Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրա-  
ժեշտ երկու դանկանի նամակագրում ի միասին զրկել:

---

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանցի Բերա, 5 Պայրամ վ. 5: Տպարանս իսկ ամենայնի նոյն եւ ի վիճակի է  
որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը սպուին ամէն տեսակ ծանուցումներ, զիջեր, տեսներ, հրաւիրագիրներ,  
հարդեր, հարդ-տարէներ, մանուկներ, եւն., եւն.: Դիւները անմիջեղի կը տրուի ամսն են: Գեղեցկագիտական հա-  
շակի եւ տպագրական մատուցութեան կողմանէ յաճախորդները անտարակոյս գոն պիտի մնան:

---

ԿԸ ԾԱՆՈԹՈՒՆ «Տարրական Սկզբունք Բրիտանական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխա-  
նութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Դիւն, ամուր քղ թակազմը 2 դիկն: